

Գիտական խորհրդի նախագահ՝

Ե. Սերոբյան



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ/ՀԱՅՅՈՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգով կարգավորվում են «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման հետ կապված գործընթացները:
- 1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ կառավարության 25.02.2016թ.-ի N 238-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման» կարգը, ՀՀ Կրթության և գիտության նախարարության 13.04.2017թ.-ի «Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա և հայցորդություն) կրեդիտային համակարգի ներդրման մասին» N371 հրամանը, ՀՀ կառավարության 29.11.2007թ.-ի «ՀՀ պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման, առկա ուսուցմամբ ասպիրանտների և դոկտորանտների կրթաթոշակների չափերը սահմանելու և ՀՀ կառավարության 23.03.2006թ.-ի N 396-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1403-Ն որոշումը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական փաստաթղթեր:
- 1.3. Ասպիրանտը/հայցորդը բարձրագույն կրթության երրորդ աստիճանում ուսումնառող անձ է:
- 1.4. Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որը ներկայացվում է գիտական աստիճանի հայցման համար, կարող է գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում և/կամ կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական կամ տեխնոլոգիական մշակում:

2. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- 2.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը հաստատություններից ստացած հայտերի հիման վրա, սահմանված կարգով, ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերը:
- 2.2. Համալսարանը ամբիոններից ստացած համապատասխան հիմնավորումների (գիտական կադրերի պատրաստման) արդյունքում հայտերը ներկայացնում է ՀՀ Կրթության և գիտության նախարարություն:

- 2.3. Ասպիրանտուրայի ընդունելությունը՝ առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար) պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով տեղերի համար, իրականացվում է համապատասխան տարվա ժամանակահատվածի գորակոչը կազմակերպելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում:
- 2.4. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (այսուհետ՝ վճարովի) տեղերի համար ասպիրանտուրայի և հայցորդական համակարգի ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:
- 2.5. Համալսարանը ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից ստացված գրության հիման վրա պաշտոնական կայքում և մամուլում տալիս է հայտարարություն համապատասխան մասնագիտություններով անվճար, պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով և վճարովի ընդունելության տեղերի և ժամանակահատվածի վերաբերյալ:
- 2.6. Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձինք:
- 2.7. Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից Համալսարանի ռեկտորի անունով ներկայացվում է դիմում (Հավելված 1)՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.
- 2.7.1. անձնագրի և սոցիալական քարտի բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները վերադարձվում են դիմումը լրացնելուց հետո),
- 2.7.2. ինքնակենսագրություն,
- 2.7.3. երեք լուսանկար՝ 3x4 չափի,
- 2.7.4. անձնական թերթիկ,
- 2.7.5. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների ու դրանց հավելվածների բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո), (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
- 2.7.6. «Օտար լեզու», «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների աստեսավորման վկայականներ կամ դրանց համապատասխան տեղեկանքներ,
- 2.7.7. ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճեն կամ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում գիտական ռեֆերատ՝ մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի հետ միասին,
- 2.7.8. գիտական ղեկավարի գրավոր համաձայնությունը ղեկավարման վերաբերյալ (Հավելված 2),
- 2.7.9. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):
- 2.8. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի կամ պրոռեկտորի նախագահությամբ:
- 2.9. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է մասնագիտական քննական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից

հինգ մասնագետ:

- 2.10. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է Համալսարանի ռեկտորը և ներկայացնում է ՀՀ Կրթության և գիտության նախարարություն:
- 2.11. Համալսարանի հայտարարությունների համար նախատեսված վայրում փակցվում և/կամ պաշտոնական կայքում տեղադրվում են մասնագիտական քննության
- 2.11.1. անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ տեղեկատվություն՝ քննությունը սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ,
- 2.11.2. հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ,
- 2.11.3. ընթացակարգային պահանջները՝ սահմանված սույն կանոնակարգով:
- 2.12. Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվություն տալիս է Համալսարանի ընդունող հանձնաժողովը՝ ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի ստուգումն իրականացնելուց հետո:
- 2.13. Ստորև նշված օտար լեզուների համար անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝
- անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,
 - ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիԷՖ)՝ 200 միավորը,
 - գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:
- Այն դիմորդները, որոնք համար մասնագիտական առարկաներ են անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը, քննություն են հանձնում այլ օտար լեզվից:
- 2.14. «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկայի համար անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:
- 2.15. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ կրթական աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է Համալսարանի մասնագիտական ամբիոնների և հաստատվում Համալսարանի ռեկտորի կողմից:
- 2.16. Հրապարակված հարցաշարից մասնագիտական քննությունից 2 աշխատանքային օր առաջ Հանձնաժողովի նախագահի կողմից կազմվում են հարցատոմսեր, որոնք հաստատվում են Հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և Համալսարանի կնիքով: Հարցաշարերը և հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են:
- 2.17. Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:
- 2.18. Ելնելով մասնագիտության առանձնահատկությունից՝ մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը:
- 2.19. Բանավոր քննությունը ձայնագրվում է, և ձայնագրությունը պահպանվում է արդյունքների հրապարակումից հետո առնվազն 24 ժամ: Գրավոր քննության աշխատանքները պահվում են դիմորդի անձնական գործում:
- 2.20. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13 (տասներեք) միավոր: Գիտելիքների գնահատման մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի հիման վրա:
- 2.21. Մասնագիտական քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգը հետևյալն է.
- 2.21.1. Դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել Հանձնաժողովին արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ժամվա ընթացքում՝ Հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր դիմում-բողոք, որը քննարկվում է նույն օրը:
- 2.21.2. Բողոքարկմանը մասնակցում են տվյալ Հանձնաժողովի անդամ չհանդիսացող Համալսարանի վարչական անձնակազմի, Ուսանողական գիտական ընկերության

և/կամ Ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են Համալսարանի ռեկտորի կողմից: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը նույն Հանձնաժողովի նախագահն է:

- 2.21.3. Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում՝ լսվում ձայնագրությունը:
- 2.21.4. Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, Հանձնաժողովի անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝
 - գնահատականը թողնել անփոփոխ,
 - գնահատականը բարձրացնել:
- 2.21.5. Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի, Համալսարանի վարչական անձնակազմի, Ուսանողական գիտական ընկերության, Ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և դիմորդի կողմից:
- 2.21.6. Նշված անձանցից որևէ մեկի՝ ընդունված որոշման վերաբերյալ անհամաձայնության դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:
- 2.21.7. Գնահատականի վերանայման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:
- 2.21.8. Մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:
- 2.22. Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:
- 2.23. Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է Համալսարանի տվյալ ուսումնական տարվա ընդունելության քննության ընթացքում:
- 2.24. Մրցույթի արդյունքում ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:
- 2.25. Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝
 - 2.25.1. մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի միջին որակական գնահատականը,
 - 2.25.2. բակալավրի և մագիստրոսի դիպլոմների միջին որակական գնահատականների գումարը,
 - 2.25.3. հրատարակված գիտական աշխատանքների թիվը,
 - 2.25.4. միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):
- 2.26. Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ ընդունում է համապատասխան որոշում:
- 2.27. Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.28. Ասպիրանտի հրամանագրումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր (Հավելված 3):
- 2.29. Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին Համալսարանի ռեկտորի հրամանով տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից. հայագիտական ուղղվածությամբ մասնագիտություններով՝ 30.000 ՀՀ դրամ, բնագիտական և այլ մասնագիտություններով՝ 25.000 ՀՀ դրամ, տնտեսագիտական և

իրավաբանական մասնագիտություններով՝ 20.000 ՀՀ դրամ :

3. ՀԱՅՅՈՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- 3.1. Հայցորդական համակարգ կարող են ընդունվել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձինք:
- 3.2. Հայցորդության ընդունելության հայտարարությունը տրվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբեր ամսին:
- 3.3. Հայցորդական համակարգ ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից Համալսարանի ռեկտորի անունով ներկայացվում է դիմում (Հավելված 1)՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.
 - 3.3.1. անձնագրի և սոցիալական քարտի բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո),
 - 3.3.2. ինքնակենսագրություն,
 - 3.3.3. երեք լուսանկար՝ 3x4 չափի,
 - 3.3.4. անձնական թերթիկ,
 - 3.3.5. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների ու դրանց հավելվածների բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո), (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
 - 3.3.6. ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճեն կամ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում գիտական ռեֆերատ՝ մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի հետ միասին,
 - 3.3.7. գիտական ղեկավարի գրավոր համաձայնություն գիտական ղեկավարման վերաբերյալ (Հավելված 2),
 - 3.3.8. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում),
 - 3.3.9. քաղվածք համապատասխան ամբիոնի նիստի արձանագրությունից՝ եզրակացություն-երաշխավորությամբ:
- 3.4. Հայցորդության ընդունելության կազմակերպման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի կամ պրոռեկտորի նախագահությամբ:
- 3.5. Ընդունող հանձնաժողովն ընդունելությունն իրականացնում է պահանջվող փաստաթղթերի ստուգումն իրականացնելուց հետո: Հանձնաժողովի որոշումն ամրագրվում է համապատասխան նիստի արձանագրության մեջ:
- 3.6. Հայցորդի կցագրումը, այնուհետև հրամանագրումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ հայցորդի հետ կնքելով համապատասխան պայմանագիր (Հավելված 4):

4. ԱՍՊԻՐԱՆՏՈՒԲՍՈՒՄ/ՀԱՅՅՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

- 4.1. Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3 (երեք) տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 (չորս) տարին:
- 4.2. Հայցորդական համակարգում ուսուցումն իրականացվում է վճարովի հիմունքներով: Ուսուցման տևողությունը չի գերազանցում 5 (հինգ) տարին:

- 4.3. Ասպիրանտուրայում/հայցորդական համակարգում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական: 50 կրեդիտը նախատեսվում է կրթական, 130 կրեդիտը՝ հետազոտական բաղադրիչին (Հավելված 5):
- 4.4. Ասպիրանտուրայում/հայցորդական համակարգում ուսումնական գործընթացը կազմակերպվում է զարնանային և աշնանային շրջաններով՝ 4-շաբաթյա տևողությամբ՝ ըստ հետևյալ ժամանակացույցի՝
- աշնանային շրջան- նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15,
 - զարնանային շրջան- մարտ:
- 4.5. Իրականացված դասընթացների ամփոփիչ ստուգումները և լուծարքները կազմակերպվում են ըստ հետևյալ ժամանակացույցի.
- Աշնանային շրջան
- Ամփոփիչ ստուգումներ- հունվարի 8-ից 30-ը
 - I լուծարքային շրջան-փետրվարի 5-ից 15-ը
 - II լուծարքային շրջան- փետրվարի 20-ից 28-ը
- Գարնանային շրջան
- Ամփոփիչ ստուգումներ- հունիսի 1-ից 30-ը
 - I լուծարքային շրջան-հուլիսի 1-ից 10-ը
 - II լուծարքային շրջան-սեպտեմբերի 1-ից 15-ը
- 4.6. Ամփոփիչ ստուգումների գնահատման գործընթացն իրականացվում է ըստ ՇՊՀ-ում հետազոտողի գիտելիքների գնահատման սանդղակի (Հավելված 6)
- 4.7. Բազմագործոնային (վերջնական) գնահատականը ձևավորվում է երկու գործոնների հիման վրա՝ համապատասխան կշիռներով. անհատական աշխատանք՝ 30%, ամփոփիչ ստուգում՝ 70%:
- 4.8. Կրթական բաղադրիչի ոչ մասնագիտական դասընթացների անցումային շեմ համարվում է 61 միավորը, իսկ մասնագիտական դասընթացներինը՝ 75 միավորը:
- 4.9. Կցագրումից հետո՝ մինչ որպես ասպիրանտ/հայցորդ հրամանագրվելը, հետազոտողը տասնօրյա ժամկետում պարտավոր է վճարել առաջին կիսամյակի վարձավճարը:
- 4.10. Որպես ասպիրանտ/հայցորդ հրամանագրվելուց և ռեկտորի հետ պայմանագիր կնքելուց հետո եռամսյա ժամկետում հետազոտողը պետք է Համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն ներկայացնի.
- 4.10.1. գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ քաղվածք՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից թույլատրված հաստատության կողմից,
- 4.10.2. տվյալ մասնագիտության համար գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնահետազոտական աշխատանքների պլանի (Հավելված 7) հիման վրա գիտական ղեկավարի և ասպիրանտի/հայցորդի կողմից մշակված ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքի անհատական պլաններ (Հավելված 8,9), որոնք պետք է հաստատվեն համապատասխանաբար գիտական խորհրդի և թողարկող ամբիոնի կողմից (պլանների նախնական տարբերակներ անհրաժեշտ է երկամսյա ժամկետում ներկայացնել Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն):
- 4.11. Գիտական ղեկավարի հաստատումից հետո ասպիրանտի/հայցորդի և գիտական ղեկավարի միջև կնքվում է համաձայնագիր (Հավելված 10)
- 4.12. Ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը հարկավոր է կազմել յուրաքանչյուր տարվա համար՝ նախատեսելով՝
- առկա համակարգի ասպիրանտի համար առնվազն 40 կրեդիտ,

- հեռակա համակարգի ասպիրանտի համար առնվազն 30 կրեդիտ,
 - հայցորդի համար առնվազն 20 կրեդիտ:
- 4.13. Որպես ասպիրանտ/հայցորդ հրամանագրվելուց հետո ուսումնառության ընթացքում հետագոտողը պարտավոր է ուսումնասիրել ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված դասընթացները, տպագրել անհրաժեշտ քանակությամբ հոդվածներ, ավարտել ատենախոսությունը, համապատասխան հաստատությունում հանձնել մասնագիտական որակավորման քննություն(ներ)ը և անցկացնել ատենախոսության նախնական քննարկում՝ կուտակելով համապատասխան կրեդիտները:
- 4.14. Ասպիրանտին համապատասխան ամբիոնի կողմից տարեկան հատկացվում է առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն:
- 4.15. Ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:
- 4.16. Եթե Համալսարանում հնարավոր չէ իրականացնել ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված դասընթացները, ապա դրանց ուսուցումը պայմանագրային հիմունքներով կարող է իրականացվել այլ հաստատությունում՝ Համալսարանի միջոցների հաշվին:
- 4.17. Ասպիրանտը/հայցորդը, ըստ ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի, յուրաքանչյուր տարվա վերջին Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն է ներկայացնում հաշվետվություն (Հավելված 11) և ատեստավորվում ամբիոնի կողմից: Համալսարանի համապատասխան ամբիոնում և ֆակուլտետի խորհրդում, անհրաժեշտության դեպքում նաև գիտական խորհրդում, պարբերաբար լսվում և քննարկվում են ասպիրանտների/հայցորդների ու նրանց ղեկավարների հաշվետվությունները:
- 4.18. Ասպիրանտը/հայցորդը ամբիոնի կողմից չի ատեստավորվում ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով տվյալ տարում նախատեսված կրեդիտների 20%-ից ավելին չկուտակելու դեպքում: Այդ դեպքում իրականացվում է պայմանական ատեստավորում՝ սահմանելով հստակ ժամկետ առկա թերությունները շտկելու համար: Ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված, սակայն չկուտակված կրեդիտները, որ չեն գերազանցում 20%-ի շեմը, գումարվում են ատեստավորում անցած ասպիրանտի/հայցորդի՝ հաջորդ տարվա համար նախատեսված կրեդիտներին: Այդ կրեդիտների համար կատարվում է հավելյալ վճարում՝ ըստ 1 կրեդիտի համար սահմանված գումարի:
- 4.19. Պայմանական ատեստավորման դեպքում թողարկող ամբիոնի կողմից սահմանված ժամկետում ասպիրանտը/հայցորդը ներկայացնում է կրկնակի հաշվետվություն, որի արդյունքում.
- ատեստավորվում է, եթե չկուտակված կրեդիտները չեն գերազանցում պայմանականորեն ատեստավորված տարում ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված կրեդիտների 20%-ը,
 - հեռացվում է՝ հակառակ դեպքում:
- 4.20. Ատեստավորում չանցած ասպիրանտը/հայցորդը Համալսարանի ռեկտորի հրամանով հեռացվում է հետազոտողի կրթական համակարգից:
- 4.21. Գիտական հետազոտություններ կատարելիս ասպիրանտն/հայցորդն օգտվում է Համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանային պաշարներից, գործուղումների իրավունքից (ըստ Համալսարանում սահմանված կարգի) և այլն:

- 4.22. Համալսարանից հեռացված/ազատված ասպիրանտն/հայցորդն առնվազն մեկ կիսամյակ հետո կարող է վերականգնվել հետազոտողի կրթական աստիճանի համապատասխան կուրս վճարովի հիմունքով ուսումը շարունակելու համար՝ հիմնավորելով գիտական ղեկավարի ու ատենախոսության թեմայի փոփոխումը կամ պահպանումը և ներկայացնելով ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքների անհատական նոր պլաններ:
- 4.23. Վերականգնված ասպիրանտ/հայցորդի ատենախոսության թեմայի լրիվ փոփոխության դեպքում ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի հետազոտական բաղադրիչից նախկինում կուտակած կրեդիտները հաշվի չեն առնվում, իսկ մասնակի փոփոխության դեպքում թողարկող ամբիոնի կողմից կատարվում է նախկինում կուտակած կրեդիտների վերահաշվարկ՝ համապատասխան հիմնավորմամբ:
- 4.24. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին/հայցորդին իր ցանկությամբ Համալսարանի կողմից անվճար տրվում է ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի/հայցորդի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը Համալսարանի ռեկտորին ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- 4.25. Առկա ուսուցմամբ ասպիրանտին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:
- 4.26. Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ:
- 4.27. Ասպիրանտի/հայցորդի գիտական ղեկավարի աշխատանքի վարձատրությունը կատարվում է ըստ պայմանագրի՝ մեկ ասպիրանտի/հայցորդի համար տարեկան 50 ժամ հաշվարկով:
- 4.28. Ռեկտորը կարող է ամբիոնի առաջարկությամբ արտաբյուջետային միջոցների հաշվին ասպիրանտի/հայցորդի գիտական ղեկավարի աշխատավարձին հավելվածար սահմանել՝ համապատասխան հիմնավորմամբ:
- 4.29. Համալսարանն իր միջոցների հաշվին համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում ուսման վարձավճարն ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում է (մասնակի զեղչերի կիրառմամբ) հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց՝
- 1-ին կամ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող հետազոտողներ,
 - առանձնահատուկ դեպքերում Համալսարանի ռեկտորի առաջարկությամբ և մանդատային հանձնաժողովի որոշմամբ՝ այլ կարգավիճակ ունեցող հետազոտողներ:
- 4.30. Վարձավճարի զեղչման նպատակով հետազոտողները ռեկտորին դիմում կարող են ներկայացնել աշնանային և գարնանային շրջանների դասընթացների մեկնարկից հետո՝ 2 շաբաթվա ընթացքում (1-ին կուրսի հետազոտողները վարձավճարի զեղչման հնարավորությունից կարող են օգտվել սկսած գարնանային շրջանից):
- 4.31. Ներկայացված դիմումները քննարկվում են Համալսարանի մանդատային հանձնաժողովի կողմից, որի արդյունքների հրապարակումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հետազոտողները կարող են դիմում-բողոք ներկայացնել ռեկտորին:

5. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ/ՀԱՅՑՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 5.1. Հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների պլանով նախատեսված պրակտիկական իրականացվում է 6-շաբաթյա տևողությամբ:
- 5.2. Ասպիրանտը/հայցորդը և գիտական ղեկավարը որոշում են ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված պրակտիկայի ձևը (մանկավարժական/հետազոտական), անցկացման ժամանակահատվածը և վայրը՝ հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները: Ասպիրանտն/հայցորդն առաջարկը

գեկուցագրով ներկայացնում է Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն՝ պրակտիկայի մեկնարկից առնվազն 1 ամիս առաջ:

- 5.3. Տվյալ շրջանում պրակտիկա նախատեսած հետազոտողների տվյալները Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից ներկայացվում են Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրակտիկայի պատասխանատուին՝ համապատասխան հրամանի նախագիծը կազմելու նպատակով:
- 5.4. Պրակտիկան սկսելուց առաջ պրակտիկայի պատասխանատուի կողմից հետազոտողին են տրամադրվում պրակտիկայի ավարտին ներկայացվող հետևյալ փաստաթղթերի նմուշները. պրակտիկայի աշխատանքային անհատական պլան (Հավելված 12), բնութագիր պրակտիկայի ղեկավարի կողմից, բնութագիր պրակտիկայի անցկացման վայրից, ասպիրանտ/հայցորդի հաշվետվություն (Հավելված 13):
- 5.5. Պրակտիկայի վերահսկողությունն իրականացվում է Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրակտիկայի պատասխանատուի կողմից:
- 5.6. Բազմագործոնային (վերջնական) գնահատականը ձևավորվում է հետևյալ գործոնների հիման վրա.

Մասնավարժական պրակտիկա

- Մասնագիտական հմտություններ -60%
- Ընդհանրական հմտություններ-30%
- Հաճախում-10%

Հետազոտական պրակտիկա

- Մասնագիտական հմտություններ -50%
- Գործնական հմտություններ-20%
- Ստացված արդյունքների կիրառելիություն-20%
- Հաճախում-10%

- 5.7. Պրակտիկայի գնահատման անցումային շեմ համարվում է 75 միավորը:
- 5.8. Ձևավորված վերջնական գնահատականի հիման վրա Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրակտիկայի պատասխանատուի կողմից կազմվում և Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն ու թողարկող ամբիոն է տրվում պրակտիկայի տեղեկագրի մեկական օրինակ:
- 5.9. 50%-ից ավելի բացակայությունների դեպքում հետազոտողի պրակտիկան գնահատվում է «անբավարար»:
- 5.10. Պրակտիկային անհարգելի պատճառով չմասնակցած կամ «անբավարար» գնահատված հետազոտողները Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի ներկայացմամբ և Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրակտիկայի պատասխանատուի միջնորդությամբ ենթակա են հեռացման: Բացառիկ դեպքերում (առողջական խնդիրներ, հղիություն, մինչև 2 տարեկան երեխա, արտակարգ իրավիճակներ, ծառայողական հատուկ ռեժիմ) ներկայացված դիմումի, համապատասխան տեղեկանքի և/կամ կրեդիտ վճարման անդորրագրի հիման վրա ռեկտորատը կարող է թույլատրել նրանց կրկնակի պրակտիկայի անցկացումը նոր ժամանակացույցով:
- 5.11. Տվյալ մասնագիտության ուղղությամբ 6-ամսյա աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտ/հայցորդն իր ցանկությամբ կարող է չմասնակցել պրակտիկային և կուտակել կրեդիտները՝ ներկայացնելով աշխատանքի վայրից համապատասխան տեղեկանք: Այս դեպքում պրակտիկայի ղեկավարի կողմից վերահսկողությունն ու գնահատումն իրականացվում են հետազոտողի աշխատանքի վայրում պրակտիկայի անցկացման նախատեսված ժամանակահատվածում:

6. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 6.1. Ուժը կորցրած ճանաչել 2017թ. դեկտեմբերի 28-ին Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգը:
- 6.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատման պահից:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարանի
ռեկտոր _____-ին

Դիմում

Խնդրում եմ թույլ տալ մասնակցել 20 -20 ուսումնական տարվա
ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելությանը _____

Մասնագիտության անվանումն ու դասիչը՝ ըստ ԲՈԿ-ի անվանացանկի

մասնագիտությամբ: Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը:

Անուն, ազգանուն

Ստորագրություն

« _____ »

20 թ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝ _____, համաձայն եմ դեկլարել _____

Գիտական ղեկավարի անուն, ազգանուն, գիտական աստիճան, կոչում

Ասպիրանտի/հայցորդի անուն, հայրանուն, ազգանուն,

թեկնածուական ատենախոսությունը _____ մասնագիտությամբ:

Մասնագիտության անվանումն ու դասիչը՝ ըստ ԲՈԿ-ի անվանացանկի

Անուն, ազգանուն

Ստորագրություն

« _____ »

20 թ.

Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

(Կազմակերպության անվանումը)

կազմակերպությունը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ղեկավարի (այսուհետ՝ Ռեկտոր)՝

(Անունը, հայրանունը, ազգանունը)

մի կողմից, և ասպիրանտուրայի ուսանող (այսուհետ՝ Ասպիրանտ)՝

(Անունը, հայրանունը, ազգանունը)

մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «կողմ» և միասին՝ որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N238-Ն որոշումը, Համալսարանի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

2. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրի առարկան Համալսարանում ուսումնառության իրականացման, ինչպես նաև ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետին աշխատանքի տեղավորելու պայմաններն են:

3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

3.1 Համալսարանը պարտավորվում է՝

- 3.1.1 մրցույթի արդյունքում ընդունված դիմորդին Ռեկտորի հրամանով ձևակերպել որպես Ասպիրանտ՝ նշելով ասպիրանտուրայում ուսուցման (առկա, հեռակա) և ֆինանսավորման (անվճար, վճարովի) ձևերը, տարկետման իրավունքը (տարկետման իրավունքով, առանց տարկետման իրավունքի),
- 3.1.2 Ասպիրանտի հրամանագրման օրվանից ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում սահմանված կարգով կազմակերպել ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատումն այն մասնագիտությունների ուղղությամբ, որոնք հաստատվել են Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից,
- 3.1.3 ասպիրանտուրայում ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար սահմանված կարգով հաստատել Ասպիրանտի ուսումնահետազոտական աշխատանքների,

ուսումնահետազոտական աշխատանքների անհատական, հետազոտական աշխատանքների անհատական պլանները,

- 3.1.4 Ասպիրանտի համար ասպիրանտուրայում ուսումնառության տարիներին ստեղծել գիտակրթական գործընթացն ապահովող անհրաժեշտ բոլոր պայմանները,
- 3.1.5 առկա ուսուցմամբ Ասպիրանտին տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին, տրամադրել երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ,
- 3.1.6 ուսումնահետազոտական աշխատանքների պլանին համապատասխան ներկայացված հաշվետվության հիման վրա յուրաքանչյուր տարի ատեստավորել/չատեստավորել Ասպիրանտին,
- 3.1.7 Ատենախոսությունը չպաշտպանած Ասպիրանտին իր ցանկությամբ Համալսարանի կողմից անվճար տրամադրել ակադեմիական տեղեկանք՝ Ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը Համալսարանի ռեկտորին ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.1.8 Ասպիրանտին համապատասխան ամբիոնի կողմից տարեկան հատկացնել առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն,
- 3.1.9 պետական պատվերի շրջանակներում ուսումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում տեղավորել աշխատանքի համապատասխան մասնագիտությամբ որպես դասախոս առնվազն երեք տարի ժամկետով:
- 3.2 Համալսարանն իրավունք ունի՝
 - 3.2.1 ատեստավորում չանցած Ասպիրանտին Ռեկտորի հրամանով ազատելու ասպիրանտուրայից,
 - 3.2.2 լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 3.3 Ասպիրանտը պարտավորվում է՝
 - 3.3.1 պահպանել Համալսարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները,
 - 3.3.2 որպես ասպիրանտ հրամանագրվելուց և ռեկտորի հետ պայմանագիր կնքելուց հետո եռամսյա ժամկետում Համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն ներկայացնի.
 - 3.3.2.1 գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ քաղվածք՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից թույլատրված հաստատության կողմից,
 - 3.3.2.2 տվյալ մասնագիտության համար գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնահետազոտական աշխատանքների պլանի հիման վրա գիտական ղեկավարի և ասպիրատի/հայցորդի կողմից մշակված ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական

աշխատանքի անհատական պլաններ, որոնք պետք է հաստատվեն

համապատասխանաբար գիտական խորհրդի և թողարկող ամբիոնի կողմից,

3.3.3 Ուսումնահետազոտական աշխատանքների պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի ներկայացնել հաշվետվություն,

3.3.4 սահմանված կարգով հանձնել մասնագիտական որակավորման քննություն(ներ)ը:

3.3.5 պետական պատվերի շրջանակներում ուսումն ավարտելուց հետո առնվազն 3 տարի աշխատել Համալսարանում:

